323.1(47.925)
Լ-38

15 JAN 2010

ԼԵՈ

ԻՆՉ ՅՅԱԼԻՑ

ՊԱՏԿԵՐՆԵՐ, ԴԱՏՈՒՄՆԵՐ.

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ.
Ե. ԳԱՏԵՐԱՆՑ. — ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ.

Թյուն «Խորհրդային Կովկաս»-ի
ԹԻՖԼԻՍ
1925

գրեթե տիրեց Նախիջևանին։ Հրճվանք էր տիրում ամեն տեղ և վոչ վոք չէր նկատում, թե այդ պատերազմ չէր, այլ թալան, թե զորքը վոգևորվել է թալանով և թե այս հանգամանքը պետք էր համարել պետական կարգի փոփոխության և անկման մի շատ խոշոր նշան։ Այդ թալանին պատրաստվում էին վաղուց և ամենից ցերմյեռանդորեն՝ ոֆիցերները։ Հանրածանոթ փաստ է, որ թղթախաղի մեջ ոֆիցերները և զինվորները խաղում էին ի հաշիվ ապագա թալանի։ Հանրածանոթ են խաղացողների ձայնարկությունները. «Зангибасар отвечает!», «Беюк-Верды отвечает!»։ Ցեվ յերբ սկսվեց արշավանքը, ամենքը գնացին թալանի։ Հարցնում են ձիավորող ոֆիցերներին. «Куда вы?», իսկ նա պատասխանում է. «На талан!»,—խմբապետ Ռուբեն-փաշան, պատերազմի մինիստր, հայդուկային ռազմագիտության էր հետևում, խրախուսելով թալանային տրամադրությունը, և չէր հասկանում, թե այդպիսով ապանում է ամբողջ բանակը։ Թղթախաղն էլ, անզուսպ մի կիրք դարձած, մյուս կողմից էր ծծում պատերազմական վոգին։ Ցեվ ճիշտ, հաղթական Դաշնակցությունը մեծ ավար էր բերում ավերված Թուրքական յերկրներից։ Ո՞վ ասես վոր չէր գնացել խլելու և բերելու համար։ Մինչև անգամ Եջմիածնի վարդապետներն էլ էին այնտեղ։ Ցերևանի շուկայում սարերի պես